# ՎՐԱՍՏԱՆ

«ვრასტანი» (საქართველო) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 76 - 77 (16374) ՇԱԲԱԹ, 17 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2015 Թ. ԳԻՆԸ՝ 25 ԹԵԺՐԻ


ԳԱԳԱԹԱԺՈՂՈՎ

## ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՎՐԱՍՏԱՆԸ ԿԱՏԱՐՈՒՄ Է ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԵՎ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԻ ԴԵՐ»

### ԹԲԻԼԻՍԻՆ ՀՅՈՒՐԸՆԿԱԼԵՑ «ՄԵՏԱՔՍԵ ՄԵԾ ՃԱՆԱՊԱՐՀԻ» ԳԱԳԱԹԱԺՈՂՈՎԸ




*Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու հովանավորությամբ, հոկտեմբերի 15-16-ին Թբիլիսիում անցկացվեց «Մետաքսե մեծ ճանապարհ»-ի Թբիլիսյան գագաթաժողովը:*

Միջազգային այդ միջոցառման կազմակերպիչը Վրաստանի կառավարությունն է, համակազմակերպիչը՝ Չինաստանի կառավարությունը Ասիական զարգացման բանկի աջակցությամբ:

Միջոցառմանը մասնակցում են աշխարհի 31 երկրների (Հայաստան, Չինաստան, ՄԱԷ, ԱՄՆ, Թուրքիա, Հարավային Կորեա, Ադրբեջան, Աֆղանստան, Սլովենիա, Հունգարիա, Իտալիա, Չե-

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

## ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԹԵՄԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐՆ ԷԻՆ

*Թբիլիսիում անցկացվող «Մետաքսե մեծ ճանապարհ»-ի Թբիլիսյան գագաթաժողովի շրջանակներում, Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին անցկացրեց մի շարք հանդիպումներ:*

Մասնավորապես, Վրաստանի կառավարության ղեկավարը հանդիպում ունեցավ գլոբալ հարաբերությունների հարցերով «Տնտեսական համագործակցության եւ զարգացման կազմակերպության» (OECD) տնօրեն Մարկոս Բոնտուրի հետ:

Հանդիպմանը կողմերը քննարկեցին Վրաստանի կառավարության քաղաքականության առաջնահերթությունների եւ սոցիալ-տնտեսական զարգացման ուղղությամբ իշխանության իրականացվող քայլերին առնչվող հարցեր: Ինչպես նշ-

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՀԱՆԴԻՊՈՒՄ

## ԵԽԽՎ-Ի ՀԱՄԱԶԵԿՈՒՑՈՂՆԵՐԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

*Հոկտեմբերի 13-ին Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին հանդիպում ունեցավ Եվրախորհրդի Խորհրդարանական վեհաժողովի վերահսկողության կոմիտեի համազեկուցողներ Բորիս Ցիլեւիչի եւ Կերստին Լունդգրենի հետ:*

Հանդիպմանը նախագահը հյուրերին տեղեկատվություն ներկայացրեց Վրաստանում ժողովրդավարական ինստիտուտների կազմավորման եւ իրականացվող բարեփոխումների մասին: Կողմերը քննարկեցին համագործակցության ակտիվացման հեռանկարները: Ընդգծվեց, որ Եվրախորհուրդը ուշադրությամբ հետեւում է

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)



ԱՅՑ ՉԻՆԱՍՏԱՆ

## ԴԱՎԻԹ ՈՒՍՈՒՓԱՇՎԻԼԻ. «ՎՐԱՍՏԱՆԸ ԿԱՄՈՒՐՋ Է ԶԱՐԳԱՑԱԾ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՂ ԵՐԿՐՆԵՐԻ ՄԻՋԵՎ»

*Վրաստանի խորհրդարանի նախագահ Դավիթ Ուսուփաշվիլին աշխատանքային այցով գտնվում է Չինաստանում:*

Այցի շրջանակներում, խորհրդարանի խոսնակը հանդիպում ունեցավ Չինաստանի ժողովրդական ժողովի մշտական կոմիտեի նախագահ Ջան Դեծյանգի հետ, մասնակցեց եւ ելույթ ունեցավ ասիական քաղաքական

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԻՐԱՎԱԿԱՆ

## ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ ԿԱՆԳՆԵՑՐԵՑ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

*Վրաստանի Սահմանադրական դատարանը վարույթի համար ընդունեց խորհրդարանական ընդդիմության հայցը, որով կասկածի տակ է դրվում Ազգային բանկի մասին օրենքում կատարված փոփոխությունների օրինականությունը, փոփոխություններ, որոնք նախատեսում են՝ որպես ինքնուրույն կառույց, ֆինանսական վերահսկողության գործակալության հիմնում:*

Այդ հարցով Սահմանադրական դատարանին հայց են ներկայացրել Ազատ ժողովրդավարներն ու «Ազգային շարժումը»:

Վարույթի համար ըն-

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՏՈՆ

## ՆՇՎԵՑ ՍՎԵՏԻՑԽՈՎԼՈԲԱՆ ԵՎ ՄՑԽԵԹՈԲԱՆ

*Հոկտեմբերի 14-ին Վրաստանում նշվեց Փրկչի թիկնոցին եւ Կենցաղային նվիրված Սվետիցխովլոբա, ինչպես նաեւ Մցխեթոբա տոնը:*



Տոնի առիթով, Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդը Մցխեթայում, Սվետիցխովելիի տաճարում, մատուցեց տոնական պատարգ:

Հանդիպմանը ներկա էին Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին, կառավարության անդամներ, խորհրդարանի պատգամավորներ, Վրաստանում հավատարմագրված դիվանագիտական կորպուսի, ոչ կառավարական եւ միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ:

*Տոներին իրենց մասնակցությունը բերեց նաեւ էջմիածնի քաղաքապետարանի պատվիրակությունը՝ քաղաքապետ Կարեն Գրիգորյանի գլխավորությամբ:*

«ԹԲԻԼԻՍՈԲԱ-2015»

## ԾՐԱԳՐՎՈՒՄ ԵՆ ՄԱՍՇՏԱԲԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ




*Ինչպես արդեն հաղորդել ենք, այս տարի ավանդական «Թբիլիսոբան» անցկացվում է հոկտեմբերի 17-18-ին:*

Ինչպես տեղեկացրեց Թբիլիսիի քաղաքապետ Դավիթ Նարմանիան, ընթացիկ տոնի համար ծրագրվել են բավականին մասշտաբային միջոցառումներ: «Նախորդ տարվա համեմատությամբ, այս տարի ծրագրված միջոցառումներն ավելի շատ են ու ավելի մասշտաբային: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մենք տոնի առթիվ անցկացվելիք միջոցառումների մրցույթ էինք հայտարարել, այս տարի կունենանք որոշակի նորամուծություններ: Դրանցից մեկը խոհարարական մրցույթն է: Ներկայիս «Թբիլիսոբան» նվիրվում է նաեւ Թբիլիսին՝ որպես կանաչ քաղաք հիմնադրույթին, այսինքն, տոնի շրջանակներում կանցկացնենք նոր ծրագրի շնորհանդեսը, որի նպատակը քաղաքի էկոլոգիական մաքրության եւ կանաչապատման ռազմավարությունն է:

Համոզված եմ, որ մեր քաղաքացիներն ու հյուրերը կմնան բավարարված»,- հայտարարեց Դավիթ Նարմանիան:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

## ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՍՓՅՈՒՌՔԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

*Հոկտեմբերի 11-17-ին Թբիլիսիում անցկացվեց տարածաշրջանային սփյուռքի տնտեսական գիտաժողովը:*



Ֆորումի բացմանը, ելույթ ունեցավ Վրաստանի սփյուռքի հարցերով պետնախարար Գելա Դումբաձեն: Ֆորումին ներկա էին Վրաստանում Հայաստանի դեսպան Յուրի Վարդանյանը, ԱՄՆ դեսպան Յան Քելլին, ուրիշներ:

Գիտաժողովում ողջույնի խոսքով ելույթ ունեցավ Հայաստանի պատվիրակության ղեկավար, Հայաստանի սփյուռքի փոխնախարար Սերժ Սրապիոնյանը:

Հայաստանի սփյուռքի նախարարության կողմից կուտակված փորձի մասին ֆորումի մասնակիցներին գիտաժողովում պատմեցին Հայաստանի սփյուռքի նախարարի խորհրդական Ստեփան Պետրոսյանը, նախարարության Համահայկական նախագծերի ծառայության պետ Գագիկ Գյանջումյանը, մերձավոր սփյուռքի ծառայության պետ Տիրան Շագոյանը, «CISP Armenia»-ի ներկայացուցիչ Սերենա Ֆուսկոն, «CIPS Armenia Country» նախագծերի մենեջեր Քրիստինա Հայրապետյանը:

Ելույթ ունեցողների թվում էր նաեւ կառավարող գործընկեր «Գրանտ Օրթոն-Վրաստան»-ի ներկայացուցիչ Նելսոն Պետրոսյանը:

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

# ՎՐԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԸ ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ

*Հոկտեմբերի 10-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին աշխատանքային այցով գտնվում էր Ադրբեջանում:*

Այցի շրջանակներում, Իրակլի Ղարիբաշվիլին հանդիպում ունեցավ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի հետ: Հանդիպմանը կողմերը գոհունակությամբ նշեցին երկու երկրների միջեւ քաղաքական, տնտեսական, մարդասիրական եւ մյուս ոլորտներում երկկողմ հարաբերությունների հաջող զարգացումը, ընդգծեցին էներգետիկական, տրանսպորտային, ենթակառուցվածքային ոլորտներում համատեղ նախագծերի իրականացման կարեւորությունը: Ընդգծվեց նաեւ երկկողմ համագործակցության զարգացման հեռանկարների տեսանկյունից Վրաստանի վարչապետի սույն այցի կարեւորությունը:

Այցի շրջանակներում հայտնի դարձավ, որ Ադրբեջանի կառավարական պատվիրակությունը՝ նախագահ Իլհամ Ալիեւի ղեկավարությամբ, նոյեմբերի 6-ին կժամանի Վրաստան:

ՀԱՆԴԻՊՈՒՄ

# ԵԽԽՎ-Ի ՀԱՄԱԶԵԿՈՒՑՈՂՆԵՐԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Վրաստանում դատական եւ ընտրական համակարգերի բարեփոխումների ընթացքին:

ԵԽԽՎ համազեկուցողների հետ հանդիպում ունեցան նաեւ Վրաստանի փոխվարչապետ, արտաքին գործերի նախարար Գիորգի Կվիրիկաշվիլին եւ հաշտեցման ու քաղաքացիական իրավահավասարության պետնախարար Պաատա Զաքարեիշվիլին:

Հանդիպումներում քննարկվեցին Վրաստանում բռնազավթված տարածքներում ստեղծված իրավիճակի, Մոսկվայի ու անջատողական Աբխազիայի եւ Սամաչաբլոյի միջեւ ստորագրված համաձայնագրի, այդ երկրամասերում ստեղծված հումանիտար ծանր վիճակին առնչվող հարցեր:

ԱՅՑ ՉԻՆԱՍՏԱՆ

# ԴԱՎԻԹ ՈՒՍՈՒՓԱՇՎԻԼԻ. «ՎՐԱՍՏԱՆԸ ԿԱՄՈՒՐՋ Է ԶԱՐԳԱՑԱԾ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՂ ԵՐԿՐՆԵՐԻ ՄԻՋԵՎ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

կուսակցությունների «Մետաքսե մեծ ճանապարհի» թեմատիկ գիտաժողովին:

Իր ելույթում, Վրաստանի խորհրդարանի նախագահը խոսեց Չինաստանի ղեկավարության «Մի գոտի, մի ուղի» նախաձեռնության մեջ Վրաստանի դերի եւ նշանակության մասին: Նրա խոսքերով, Վրաստանը պատմականորեն եղել է այն բնական կամուրջը, որը կապում էր Եվրոպային, Կենտրոնական Ասիային, Ռուսաստանին եւ Մերձավոր Արեւելքին եւ «Մետաքսե մեծ ճանապարհի» ու Ասիայի հետ հարաբերությունների վերականգնմամբ, Վրաստանը իր դերը կվերադարձնի եվրոպայում: «Մենք գտնվում ենք առեւտրական նոր ուղերքի կենտրոնում, կամուրջ ենք աշխարհի զարգացած եւ զարգացող երկրների տնտեսությունների միջեւ»,- հայտարարեց Դավիթ Ուսուփաշվիլին:




ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

# ԹԵԱ ԾՈՒԼՈՒԿԻԱՆԻ. «ՀԱԱԳԱՅԻ ԴԱՏԱՐԱՆԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ Է ԱՆՀԱՏՆԵՐԻ ԵՎ ՈՉ ԹԵ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՂԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ»



*Վրաստանը չի կարող պատժվել Հաագայի դատարանի կողմից: Ինչպես հայտարարեց Վրաստանի արդարադատության նախարար Թեա Ծուլուկիանին, Հաագայի դատարանը մարդկության դեմ կատարած հանցագործության քննարկման դատարան չէ, այն հետաքննում է միայն անհատների կողմից կատարած իրավախախտումները:*

Ընդսմին, արդարադատության նախարարը նշեց, որ Վրաստանի գլխավոր նպատակն է օգնել Հաագայի դատարանին՝ հայտնաբերելու այն մարդկանց, ովքեր Վրաստանում էթնիկական զտում են իրականացրել եւ խոշտանգել վրաց զինծառայողներին:

«Եթե Հաագայի դատարանի կողմից որեւէ մեկը պատժվի, ապա դա կլինի անհատ, այնտեղ Վրաստանը չի պատժվի: Անհատները կարող են լինել տարբեր ազգության ներկայացուցիչներ»,- ընդգծեց Թեա Ծուլուկիանին:

Ինչպես տեղեկացրեց նախարարը, հոկտեմբերի 16-ին Հաագայի դատարանի դատախազը ժամանեց Վրաստան: Նա ծրագրում է հանդիպումներ ունենալ պատերազմից տուժվածների հետ, եւ դատախազությունը նրանց 30-օրյա ժամկետում ճանաչելու է որպես տուժյալներ: Նրա հավաստմամբ, տուժվածների ու դատախազի հանդիպումներին ոչ ոք իրավունք չունի միջամտել, «քանի որ դա նրանց գործն է, եւ ոչ մի կառավարություն դրանց միջամտելու իրավունք չունի»:

ՖԻՆԱՆՍՆԵՐ

# ՆՈԴԱՐ ԽԱԴՈՒՐԻՆ ՀԱՆԴԻՊԵՑ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՀԵՏ

*Տոգոյի մայրաքաղաք Լիմայում անցկացվեց Համաշխարհային բանկի եւ Արժույթի միջազգային հիմնադրամի կառավարիչների ամենամյա հանդիպումը, որին մասնակցեց Վրաստանի ֆինանսների նախարար Նոդար Խադուրին:*

Ֆինանսական եւ վարկային ոլորտում համագործակցության խորացմանը նվիրված ամենամյա հանդիպման շրջանակներում, Նոդար Խադուրին հանդիպում ունեցավ Եվրամիության հարեւանության եւ ընդլայնման բանակցությունների գլխավոր տնօրենի տեղակալ Կատարին Մատերնովի, Արժույթի միջազգային հիմնադրամի փոխտնօրեն Մին Ժուստի, Համաշխարհային բանկի փոխտնօրեն Սիրիլ Մյուլլերի, Արաբիայի տնտեսական զարգացման Քուվեյթի հիմնադրամի գլխավոր տնօրենի տեղակալ Հեշամ Ի.Ալ-Քայամի հետ:

Հանդիպումներում քննարկվեցին կոնկրետ նախագծերի իրականացման ուղղությամբ կատարվող ֆինանսական ներդրումների արդյունավետության բարձրացման, հետագա համագործակցության խորացման հետ առնչվող հարցեր:



ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ

# ՍԿՍՎԵՑ «ԴՊՐՈՑԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ» ԳՐԱՆՑՈՒՄԸ



*Վրաստանի կրթության եւ գիտության նախարար Թամար Սանիկիձեն եւ Թբիլիսիի քաղաքապետ Դավիթ Նարմանիան «Դպրոցի համար նախապատրաստման նախագծի» գրանցման մեկնարկի կապակցությամբ անցկացրին համատեղ մամլո ասուլիս:*

Լրագրողների հետ հանդիպմանը նշվեց, որ Թբիլիսիի մանկապարտեզների գործակալության www.kids.org.ge կայք-էջում գրանցումը մեկնարկել է հոկտեմբերի 12-ից եւ կշարունակվի մինչեւ հոկտեմբերի 26-ը, իսկ նոյեմբերի 2-ին մանկապարտեզներում եւ հանրային դպրոցներում կսկսվի նախագծի իրականացումը:

«Դպրոցի համար նախապատրաստման նախագիծը», որ հիմնված է խաղերով դասավանդման մեթոդի վրա, նախատեսում է 5-6 տարեկան երեխաների նախապատրաստումը դպրոցի համար: Նախագծի նպատակն է նպաստել տարբեր ուղղություններով երեխաների զարգացմանը:

30 շաբաթ տեւողությամբ նախագիծը նախատեսում է մանկապարտեզների տարիքային ավագ խմբերում՝ օրական 3-ժամյա դասավանդում: Իսկ այն երեխաները, ովքեր մանկապարտեզներ չեն հաճախում, դպրոցի համար կնախապատրաստվեն հանրային դպրոցներում բացվող հատուկ խմբերում:

Նախագիծը, որը մշակվել է Վրաստանի կրթության նախարարության կողմից, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հետ համագործակցությամբ, կիրականացվի մայրաքաղաքի բոլոր 159 մանկապարտեզներում:



ՍԻՐԻԱ

## ՀԱԿԱԱՀԱԲԵԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ ԵՆ

*Ռուսական օդային ուժերը շարունակում են հակաահաբեկչական գործողությունները Սիրիայում: Վերջին 24 ժամվա ընթացքում «Իսլամական պետության» 86 նպատակակետեր են հայտնվել ռուսական օդուժի թիրախում: Ռուսական օդուժը ռմբակոծել է ԻՊ-ի դիրքերը՝ մեծ վնասներ հասցնելով ահաբեկիչներին:*

*Ռուսաստանը, Սիրիայի նախագահ Բաշար ալ Ասադի խնդրանքով, սեպտեմբերի 30-ին սկսել է հարվածել «Իսլամական պետություն» ահաբեկչական կազմակերպության դիրքերին: Ահաբեկիչների դեմ ռազմական գործողություններում ներառվել են ավելի քան 50 օդանավ ու ուղղաթիռ: Բացի այդ, ահաբեկիչների դիրքերը հրթիռակոծվել են ծովից:*

ԲԵԼԱՌՈՒՍ

## Ա. ԼՈՒԿԱՇԵՆԿՈՆ 5-ՐԴ ԱՆԳԱՄ ԸՆՏՐՎԵՑ ԵՐԿՐԻ ՆԱԽԱԳԱՀ

*Ալեքսանդր Լուկաշենկոն հաղթեց Բելառուսի նախագահական ընտրություններում: Ինչպես հայտնել է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ Լիդիա Երմոշինան, պետության գործող նախագահը հավաքեց ընտրողների ձայների 83,49 տոկոսը:*

*Լիբերալ-դեմոկրատական կուսակցության առաջնորդ Սերգեյ Գայդուկեւիչի օգտին քվեարկել է ընտրողների 3,32 տոկոսը, «Ասա ճշմարտությունը» քաղաքացիական շարժման ներկայացուցիչ Տատյանա Կորոտկեւիչի օգտին՝ 4,42 տոկոսը, Բելառուսի հայրենասիրական կուսակցության նախագահ Նիկոլայ Ուլախովիչի օգտին՝ ընտրողների 1,67 տոկոսը: Բոլորին դեմ է քվեարկել բելառուս ընտրողների 6,40 տոկոսը: Ընդ որում, Մինսկում բոլորին դեմ է քվեարկել 20,6 տոկոսը: Ընտրություններին մասնակցությունը կազմել է 87,2 տոկոս:*

*Այդպիսով, ընտրությունների արդյունքում 61-ամյա Ալեքսանդր Լուկաշենկոն հինգերորդ անգամ կզբաղեցնի Բելառուսի նախագահի պաշտոնը:*

ԹՈՒՐՔԻԱ

## ԱՀԱԲԵԿՉԱԿԱՆ ԱԿՏ՝ ԶՈՀԵՐՈՎ

*Անկարայում, հոկտեմբերի 10-ի առավոտյան, երկաթուղային կայարանի մոտ, թուրքքրդական բախումներին վերջ դնելու խաղաղության կոչերով հանրահավաքի ժամանակ տեղի ունեցավ երկու հզոր պայթյուն: Պաշտոնական տվյալներով, պայթյուններից զոհվել է 128 եւ վիրավորվել՝ 516 քաղաքացի:*

*Թուրքիայի անվտանգության մարմինները հայտնել են, որ պայթյուններն իրականացրել են մահապարտ ահաբեկիչները:*

ԻՐԱՆ

## ՀԱՎԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԺԱՆԱՑԱՎ «ՎԵՑՅԱԿԻ» ՀԵՏ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ

*Իրանի խորհրդարանը հավանություն է տվել երկրի միջուկային ծրագրի խնդրով միջազգային միջնորդների «վեցյակի» հետ ստորագրված համաձայնագրի իրագործման օրինագծին:*

*Խորհրդարանի նիստում համաձայնագրի կատարումը պաշտպանել է 161 պատգամավոր, 59-ը դեմ են արտահայտվել, 13-ը ձեռնպահ են մնացել: Ընդամենը քվեարկությանը մասնակցել է 250 օրենսդիր:*

*Հիշեցնենք, որ Իրանը եւ միջազգային բանակցորդների «վեցյակը» հուլիսի լույս 14-ի գիշերը պատմական համաձայնության են հասել իրանական միջուկային խնդրի կարգավորման շուրջ: Դժվարին բանակցություններն ավարտվել են գործողությունների համատեղ համապարփակ պլանի ընդունմամբ, որի կատարումը ամբողջովին կվերացնի ավելի վաղ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի, ԱՄՆ-ի եւ Եվրամիության կողմից Իրանի նկատմամբ սահմանված տնտեսական ու ֆինանսական պատժամիջոցները:*

# Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

## ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ ԴԱՏԱԽԱԶՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՆԴԻՊՄԱՆ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՄՈՒԹՅՈՒՆ

*Վրաստանի արդարադատության նախարար Թեա Ծուլուկիանին խորհրդատվություններ է սկսել գլխավոր դատախազի թեկնածուի ընտրության նպատակով:*

Նախարարի խոսքերով, ինքը պատրաստ է հանդիպել շահագրգռված յուրաքանչյուր անձի հետ: «Ցանկանում եմ դիմել ակադեմիական շրջաններին, քաղաքացիական հասարակությանը, բոլոր շահագրգիռ անձանց եւ ասել, որ դատախազության մասին օրենքում կատարված փոփոխությունների միջոցով, արդարադատության նախարարությունը սկսում է խորհրդատվություններ երկրի գլխավոր դատախազի թեկնածուի ընտրության համար»,- հայտարարեց Թեա Ծուլուկիանին:

Նրա խոսքերով, եթե պարզվի, որ դատավորներից որեւէ մեկը չի կիսում գերագույն դատավոր Նինո Գվենետաձեի որոշ գաղափարները, ապա ինքը պատրաստ է հանդիպել այդ դատավորի հետ: Մենք միշտ հաշվի ենք առել դատավորների կարծիքը: Մենք այն հաշվի ենք առնում Նինո Գվենետաձեի հետ իրականացվող բարեփոխումների ընթացքում: Եթե պարզվի, որ այդ գաղափարների հետ համաձայն չեն, ապա պատրաստ եմ հանդիպել այդ դատավորների հետ»,- ընդգծեց Թեա Ծուլուկիանին:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

## ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՆՈՐ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԿԳՈՐԾԻ 2017 ԹՎԱԿԱՆԻՑ

*Ինչպես տեղեկացրել են վրացական ԶԼՄ-ները, 2017 թվականից Վրաստանում կսկսի գործել կուտակման կենսաթոշակային համակարգը:*

Նորամուծությունից, իրենց իսկ նախաձեռնությամբ, կարող են օգտվել Վրաստանում աշխատող բոլոր քաղաքացիները: Կենսաթոշակային հիմնադրամ ամսական վճարը կկազմի աշխատավարձի 6 տոկոսը, որը չի հարկադրվի: Դրանից 2-ական տոկոսը մուծելու են աշխատողը, գործատուն եւ պետությունը: Կուտակման համակարգի համար առանձնացված գումարը կներդրվի տնտեսության ոլորտներում, եւ դրան կավելանան եկամուտները: Կենսաթոշակի դուրս գալու ժամանակ, Վրաստանի քաղաքացին կկարողանա ստանալ այդ գումարը, ինչպես նաեւ կուտակված եկամուտը: Վաղաժամկետ այդ գումարը ստանալ հնարավոր չէ, բացառությամբ առանձին դեպքերի, մասնավորապես, երբ հիմնախնդիրներ են ծագում առողջության հետ կապված:

Կուտակման կենսաթոշակային համակարգից իրատեսական օգուտ ստանալու համար, քաղաքացին պետք է առնվազն քանի տարի փող կուտակի, թեպետ կուտակման կենսաթոշակային համակարգին կարող են միանալ այն քաղաքացիները, ում մինչեւ կենսաթոշակային տարիքը մնացել է հինգ կամ վեց տարի: Ընդսմին, նրանք կունենան կենսաթոշակի դուրս գալու պահին կուտակված ողջ գումարը ստանալու հնարավորություն, քանի որ այն մեծ չի լինի:

Առաջիկայում, Վրաստանի կառավարությունը մտադիր է մշակել հատուկ ծրագիր աշխատող այն քաղաքացիների համար, ովքեր պաշտոնապես աշխատավարձ չեն ստանում:

Նշենք, որ վերջին մարդահամարի տվյալներով, Վրաստանում ապրում է 3,7 միլիոն մարդ, որից 20 տոկոսը կենսաթոշակառուներ են: 2050 թվականին կենսաթոշակառուների թիվը կհասնի 25 տոկոսի: Տարիքային կենսաթոշակառուները այս տարվա սեպտեմբերի 1-ից ստանում են 160 լարի կենսաթոշակ, ինչը 6,5 տոկոսով գերազանցում է նախորդ ցուցանիշին: Վերջին անգամ, Վրաստանում կենսաթոշակն ավելացվել է 2013 թվականի սեպտեմբերին եւ հասցվել` 150 լարիի:

## ՎԵՐԱԴԱՐՁՎԵԼ Է ՇՈՒՐՋ ԿԵՍ ՄԻԼԻՈՆ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՉՀԱՐԿԱԴՐՎՈՂ ՆՎԱԶԱԳՈՒՅՆԸ

*Ինչպես տեղեկացրել է Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայությունը, շուրջ 458,6 հազար ֆիզիկական անձի չհարկադրվող նվազագույնը վերադարձվել է: Վերադարձված գումարը կազմել է 125,8 միլիոն լարի:*

Նշենք, որ չհարկադրվող նվազագույնի վերադարձման գործընթացը մեկնարկեց ընթացիկ տարվա ապրիլի մեկին: Վրաստանի քաղաքացիներին, ում եկամուտը 2014 թվականին չի գերազանցել 6 հազար լարին, որպես չհարկադրվող նվազագույն վերադարձվեց 360 լարի:

2014 թվականին չհարկադրվող նվազագույնը ընդհանուր առմամբ 130 միլիոն լարի գումարով վերադարձվել էր 470 հազար քաղաքացիների:

ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐՈՒՄ

## ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՌԱՄՅԱ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ




*Վրաստանի բնապահպանության եւ բնական ռեսուրսների պաշտպանության նախարար Գիգլա Ագուլաշվիլին ներկայացրեց իր գլխավորած գերատեսչության վերջին երեք տարիների աշխատանքի հաշվետվությունը: «Էքսպո Ջորջիայի» ցուցասրահում անցկացված շնորհանդեսին ներկա էին Վրաստանի կառավարության անդամներ, խորհրդարանի պատգամավորներ, ոչ կառավարական եւ միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ:*

Գիգլա Ագուլաշվիլին մանրամասն տեղեկատվություն հաղորդեց գերատեսչությունում իրականացված ինստիտուցիոնալ բարեփոխումների վերաբերյալ, որոնց արդյունքում հիմնվել են նոր ծառայություններ: Նախարարը խոսեց առաջիկա ծրագրերի մասին:

Նրա խոսքերով, 2012 թվականից նախարարությունը վերադարձրեց այն գործառույթները, որոնք բաշխված էին տարբեր հաստատությունների միջեւ: Նա առանձնացրեց 15 գլխավոր ուղղությունները, որոնց շուրջ նախարարությունը աշխատում է: Դրանք են կենսաբազմազանության պահպանումը, անտառների կառավարումը եւ այլն: Ագուլաշվիլին խոսեց նաեւ նախարարության կողմից մշակված ռազմավարական փաստաթղթերի մասին, որոնք վերաբերում են անտառային ազգային հիմնադրույթին, բնապահպանության վերլուծությանը, թափոնների կառավարմանը եւ այլն:

Գիգլա Ագուլաշվիլին անդրադարձավ նաեւ ոլորտում իրավախախտումների թեմային` նշելով, որ 2013-2015 թվականներին բացահայտվել է բնական ռեսուրսների ապօրինի օգտագործման ավելի քան 19 հազար իրավախախտում, դրանց հաշվով, ընդհանուր առմամբ, սահմանվել է 8674000 լարիի տուգանք: Նախարարի խոսքերով, հաշվետու ժամանակահատվածում հիմնվել է բնության 16 հուշարձան, վերանորոգվել են պահպանվող տարածքների վարչական շենքերն ու այցելությունների կենտրոնները, հիմնվել են նոր արգելանոցներ:

ՆԱԽԱԳԻԾ

## ԿԻՐԱՐԿՎԵՑ «ՎՐԱՍՏԱՆԸ` ՔԱՂՑԱԾ ԵՐԵԽԱՆԵՐԻՑ ԶԵՐԾ» ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՈՐ ԾՐԱԳԻՐԸ

*«Սոցիալական մանկաբուժության պաշտպանության հիմնադրամը» սկսել է «Վրաստանը` քաղցած երեխաներից զերծ» նոր նախագիծը: Այդ մասին հայտարարեց բժշկական գիտությունների դոկտոր, հիմնադրամի հիմնադիր Գիորգի Չախունաշվիլին:*

Նախագծի գաղափարը ծագեց 2015 թվականի հունիսի 4-ին, Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդի հետ հանդիպման ժամանակ, ով եւ հանդիսանում է հիմնադրամի պատվավոր նախագահը: Կաթողիկոս-Պատրիարքը օրհնեց նախագիծը: Կազմակերպիչները գործարարներին եւ խոշոր ընկերություններին կոչ են անում ներգրավվել նախագծին, որպեսզի համատեղ պայքար սկսեն մանուկների սովածության դեմ:

Ինչպես նշեց Գիորգի Չախունաշվիլին, սկզբնական փուլում 6-ից մինչեւ 12 ամսական 45 երեխա կապահովվի մանկական սնունդով: «Մենք բանակցեցինք բոլոր խոշոր կազմակերպությունների հետ, որոնց օգնությամբ էլ կարողացանք հավաքել անհրաժեշտ մթերքները: Այդ 45 երեխաներից 35-ը բռնագաղթվածների զավակներ են, 5-ը` տուբերկուլյոզով հիվանդների երեխաներ, եւս 5-ը` գեմաֆիլիայով (Գենետիկ հիվանդություն, որի պատճառը ի ծնե սպիտակուցի անբավարարության արդյունքում արյան մակարդումն է) տառապողների ընտանիքից են»,- ասաց Չախունաշվիլին:

«Աստիճանաբար, այս նախագծում կներառենք սոցիալապես չպաշտպանված ընտանիքների երեխաներին: Մոտ ժամանակներում, տարիքային սահմանափակումներն էլ կվերացնենք, որպեսզի սննդամթերք ստանան նաեւ 12 ամսականից մեծ (նախադպրոցական տարիքի) երեխաները»,- հայտարարեց Գիորգի Չախունաշվիլին:

***Հիմնադրամին օգնել ցանկացողների համար ներկայացնում ենք ռեկվիզիտները. TBCBGE 22 GE33TB 77 6213 6080 1000 01, կոնտակտային հեռ.` +995 599 76 84 77***



### ՓԻՔՐԻԱ ՉԻԽՐԱՁԵՆ` ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՆԱԽԱԳԱՀԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ



*Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին ներկայացրեց քաղաքական հարցերով նախագահի նոր խորհրդական, «Նոր աջերի» լիդեր Փիքրիա Չիխրաձեին:*

*Նախագահի հավաստմամբ, իրենց թիմը համալրվեց «քաղաքական լուրջ փորձ ունեցող որակավորված քաղաքագետով»:*

*Նշենք, որ, նոր նշանակումից հետո, Փիքրիա Չիխրաձեն հեռացավ քաղաքական կուսակցությունում զբաղեցրած պաշտոնից:*

### ՄՇԱԿՎՈՒՄ ԵՆ ԽԱՓԱՆՄԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ

*Վրաստանի կառավարությունը աշխատում է խափանման այլընտրանքային միջոցների մշակման շուրջը: Այդ մասին, ներկայացնելով պատիժների կատարման եւ պրոբացիայի նախարարության երեք տարվա աշխատանքի արդյունքները, հայտարարեց նախարար Կախի Կախիաշվիլին:*

*Նրա խոսքերով, մոտ ժամանակներում կառավարությունը կներկայացնի քրեական իրավունքի դատավարական օրենսդրության փոփոխությունների փաթեթը, որտեղ ներկայացված կլինեն խափանման միջոցների մի շարք արդյունավետ ձեւերը:*

*«Մենք ցանկանում ենք մի կողմից երկրում ապահովել կայունությունն ու հասարակության անվտանգությունը, սակայն ոչ բանտերում բանտարկյալների թվաքանակի ավելացման ուղղությամբ»,- հայտարարեց նա:*

### ԱՐԺԵԶՐԿՄԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ 5,2 ՏՈԿՈՍ Է

*2015 թվականի սեպտեմբերին, նախորդ տարվա նույն ժամանակամիջոցի համեմատությամբ, Վրաստանում արժեզրկման մակարդակը կազմեց 5,2 տոկոս:*

*Վիճակագրական դեպարտամենտի տվյալներով, հաշվետու ժամանակահատվածում արժեզրկման ցուցանիշի ձեւավորման վրա ազդել է հետեւյալ խմբի ապրանքների գների փոփոխությունը:*

*Սննդամթերքներ ու ոչ ալկոհոլային խմիչքներ. այս խմբի գներն ավելացել են 4,2 տոկոսով, ինչը արժեզրկման ցուցանիշի վրա անդրադարձել է 1,28 տոկոսով:*

*Աճել են մրգերի եւ խաղողի գները (28,8 տոկոս), կարագի եւ ճարպերի (13,1 տոկոս), առողջապահության ոլորտում գների աճը կազմել է 9,8 տոկոս, ինչի ազդեցությունը արժեզրկման ցուցանիշի ձեւավորման վրա կազմել է 0,92 տոկոս: Աճել են բժշկական սարքավորումների եւ բուժապրանքների գները (21,2 տոկոս):*

*Ալկոհոլային խմիչքներ, ծխախոտ. այս խմբի ապրանքների գներն ավելացել են 13,4 տոկոսով, ինչը արժեզրկման ցուցանիշի վրա ազդել է 0,7 տոկոսով:*

### ԲՈՂՈՔ` ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ԿՈՐՍՏԻ ՊԱՏՃԱՌՈՎ

*Վրաստան-Թուրքիա սահմանային, Ախալքալաքիի շրջանի Կարծախ գյուղի բնակիչները շրջափակեցին սահմանային երկաթուղային թունելը: Բողոքի դրդապատճառը գյուղի բնակիչների սեփականության ներքո գտնվող 34 կովերի կորուստն էր:*

*Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղու շինարարությունն իրականացնող ադրբեջանական ընկերությունը ստիպված դադարեցրել է աշխատանքները:*

*Տեղի բնակիչները պահանջում են կորած անասուններին փնտրել Թուրքիայի տարածքում:*

ԳԱԳԱԹԱԺՈՂՈՎ

# ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՎՐԱՍՏԱՆԸ ԿԱՏԱՐՈՒՄ Է ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԵՎ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԻ ԴԵՐ»



(Սկիզբը` 1-ին էջում)

խիա, Ղազախստան եւ այլն) շուրջ 800 ներկայացուցիչներ, այդ թվում` երկրների փոխվարչապետեր, նախարարներ, ինչպես նաեւ միջազգային, ֆինանսական եւ դոնոր շուրջ 20 կազմակերպությունների ներկայացուցիչներ, տարբեր երկրների բիզնես-սեկտորի ներկայացուցիչներ:

Հայաստանի պատվիրակությունը գլխավորում էր երկրի էկոնոմիկայի նախարար Կարեն Ճշմարիտյանը:

Թբիլիսիի Ռուսթավելու անվան ակադեմիական թատրոնի շենքում անցկացված գագաթաժողովի բացմանը իր խոսքում Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին նշեց, որ սույն գագաթաժողովը կարեւորագույն իրադարձություն է Վրաստանի պատմության մեջ: «Դարեր շարունակ, պատմական «Մետաքսե մեծ ճանապարհը» ամենակարեւոր ցամաքային ուղին է, որը Եվրոպան կապում էր Ասիայի հետ: Դա բացառիկ ուղի էր, որը վերածվեց բարօրության եւ ինտենսիվ առեւտրական հարաբերությունների աղբյուրի, նաեւ նպաստում էր փորձի ու գիտելիքների փոխանակմանը, երկրների միջեւ մշակութային կապերի խորացմանը: Այսօր այդ ուղին վերականգնվում է, եւ այս ուղղությամբ այսօրվա գագաթաժողովը կարեւորագույն քայլ է: Որպես հյուրընկալող երկիր` Վրաստանը կատարում է փոխանակման եւ հարաբերությունների տարածաշրջանային կենտրոնի դերը»,- հայտարարեց վարչապետն ու հավելեց. «Մեր կառավարության նպատակն է Վրաստանը դարձնել բարգավաճ երկիր, որը հմտորեն կօգտագործի իր դիրքը կենսական կարեւորագույն` Արեւելք-Արեւմուտք, Հյուսիս-Հարավ խաչմերուկում»:

Վարչապետի հավաստմամբ, Թբիլիսիում սույն գագաթաժողովի անցկացումն ընդգծում է Եվրոպայի ու Ասիայի միջեւ կապի հարցում Վրաստանի բացառիկ դերը, եւ միաժամանակ, այն օգտավետ է բոլորի համար` Պեկինից մինչեւ Բրյուսել:

# ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԹԵՄԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐՆ ԷԻՆ

(Սկիզբը` 1-ին էջում)

վեց հանդիպմանը, Վրաստանի կառավարությունը, հանձինս էկոնոմիկայի նախարարության, OECD-ի հետ միասին ձեռնամուխ են եղել փոքր եւ միջին գործարարության զարգացման ռազմավարական ծրագրի մշակմանը:

Վրաստանի վարչապետը հանդիպում ունեցավ նաեւ Զարգացման ասիական բանկի փոխնախագահ Վանչայ Ժանգի հետ: Հանդիպմանը փոխնախագահը վստահություն հայտնեց, որ Վրաստանը կարող է նշանակալից դեր կատարել Եվրոպայի եւ Ասիայի միջեւ համագործակցության զարգացման գործում: Կողմերը քննարկեցին Ասիական բանկի եւ Վրաստանի կառավարության միջեւ համագործակցության զարգացման հեռանկարները: Որպես համագործակցության վառ օրինակ` նշվեց Թբիլիսիում անցկացվող գագաթաժողովի կազմակերպման գործում բանկի ցուցաբերած աջակցությունը: Հանդիպմանը կողմերը ընդգծեցին բանկի կողմից Վրաստանի պետական բյուջեին ցուցաբերվող եռամյա օգնությունը, որի շրջանակներում, որպես արտոնյալ վարկ, բանկը առանձնացրել է 75 միլիոն դոլար:

ԻՐԱՎԱԿԱՆ

# ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ ԿԱՆԳՆԵՑՐԵՑ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

(Սկիզբը` 1-ին էջում)

դունելով հայցը, Սահմանադրական դատարանը կանգնեցրեց ֆինանսական վերահսկողության գործակալության աշխատանքը: Դատարանի հայտարարության մեջ նշված է, որ, մինչեւ վերջնական որոշման ընդունումը, ֆինանսական վերահսկողության գործակալության գործառույթները իրականացնելու է Ազգային բանկը:

Ընդդիմությունը գտնում է, որ, որպես առանձին կառույց, ֆինանսական վերահսկողության առանձնացմամբ կառավարությունը Ազգային բանկին զրկել է հիմնական գործառույթից, իսկ երկրի նախագահին` Ազգային բանկի խորհրդի ընտրությանը մասնակցելու իրավունքից:

Հիշեցնենք, որ Վրաստանի խորհրդարանի կողմից «Ազգային բանկի մասին» օրենքում կատարած փոփոխություններով ֆինանսական վերահսկողության գործակալությունը վերապահվում էր կոմերցիոն բանկերի եւ ֆինանսական մյուս կազմակերպությունների հավաստագրման, վերահսկողության եւ կարգավորման, սահմանափակումների ու պատժամիջոցների սահմանման իրավունքը:

Մինչեւ փոփոխությունների ընդունումը, Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին հանդես էր գալիս Ազգային բանկի կողմից ֆինանսական վերահսկողության գործառույթի պահպանման եւ դրա անկախության ուժեղացման դիրքերից, սակայն խորհրդարանը նկատի չունեցավ նախագահի դիրքորոշումը, եւ 2015 թվականի սեպտեմբերի 11-ին «Ազգային բանկի մասին» օրենքը մտավ ուժի մեջ:

Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին, քննադատելով փոփոխությունների հակառակորդներին, հայտարարեց, որ «Օրինանախագծի շուրջ, ներդրողներին վախեցնելու նպատակով, արհեստական իրարանցում են առաջացրել անպատասխանատու քննադատները»:

# ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒՂՂՎԱԾ Է ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ

***Մեկնաբանելով Վրաստանի Սահմանադրական դատարանի` ֆինանսական վերահսկողության գործակալության աշխատանքը դադարեցնելու մասին որոշումը` Վրաստանի խորհրդարանի ֆինանսա-բյուջետային կոմիտեի նախագահ Թամազ Մեչիաուրին հայտարարեց, որ դա երկրի կառավարության դեմ ուղղված քայլ է:***

Պատգամավորի խոսքերով, Սահմանադրական դատարանի սույն որոշումը չի նպաստի ընդհանուր գործին, քանի որ ֆինանսական վերահսկողության գործակալությունը դեռեւս գործնականում չէր էլ սկսել աշխատանքը: «Այդ քայլը սխալ եմ համարում, այնպիսի տպավորություն է ստեղծվել, որ այն ուղղված է կառավարության դեմ, քանի որ գործակալությունը աշխատանքը չէր էլ սկսել: Կարծում եմ, դա հասարակությունում իրարանցում կառաջացնի»,- ասաց Մեչիաուրին:

ՏԱԳՆԱՊԱԼԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

# ԿՐԿՆԱՊԱՏԿՎԵԼ Է ԱՎՏՈՎԹԱՐՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԶՈՀԵՐԻ ԹԻՎԸ

***Նախորդ տարվա համեմատությամբ, կրկնապատկվել է ավտովթարների, ինչպես նաեւ դրանց զոհերի ու վիրավորվածների թիվը: 2015 թվականի առաջին կիսամյակում, ավտովթարների արդյունքում, զոհվածների թիվը ավելացել է 37 տոկոսով: Մասնագետների հավաստմամբ, ավտովթարների գլխավոր պատճառը արագության շահարկումն է, ինչպես նաեւ վարորդների ու հետիոտնների կողմից երթեւեկության կանոնների խախտումը:***

Տրանսպորտի եւ ճանապարհների ասոցիացիայի նախագահ Դավիթ Մեսխիշվիլու հայտարարությամբ, վերջին ժամանակներում ավտովթարների թիվը զգալիորեն ավելացել է: «Առանձնակի մտահոգիչ է այն փաստը, որ, 2014 թվականի համեմատությամբ, վթարների արդյունքում մահացության թիվը ավելացել է 37 տոկոսով: Նկատի ունեցեք, որ դա 2015 թվականի միայն առաջին կեսի ցուցանիշն է, այնպես որ, մինչեւ տարվա վերջն այն է'լ ավելի կմեծանա»,- ընդգծեց Մեսխիշվիլին: Նրա խոսքերով, հաշվետու ժամանակահատվածում գրանցված 4200 ավտովթարի արդյունքում, մարմնական վնասվածքներ է ստացել շուրջ 2000 եւ զոհվել` 300 մարդ: «2012 թվականի համեմատությամբ, ավտովթարների թիվը ավելացել է 35 տոկոսով, իսկ 2014-ի համեմատությամբ` 15 տոկոսով»,- նշեց նա:

Անդրադառնալով ավտովթարների պատճառի հարցին` Դավիթ Մեսխիշվիլին նշեց երթեւեկող ավտոմեքենաների մեծ քանակությունը: «Սա պատճառներից մեկն է, սակայն` ոչ գլխավորը: Իսկ գլխավորը արագության գերազանցումն է, շրջանցման կանոնների խախտումը: Նկատվել են նաեւ ոչ սթափ վիճակում մեքենան վարելու դեպքեր»,- նշեց Մեսխիշվիլին եւ հավելեց. «Ժամանակին մենք զգուշացնում էինք, որ արագության գերազանցման համար տուգանքի կիսով չափ նվազեցումը դրական արդյունքի չի հանգեցնի: Այդպես էլ եղավ: Բացի այդ, միջքաղաքային երթուղային կիսաավտոբուսները մեծ մասամբ տեխնիկապես կարգավորված չեն, ինչը լուրջ սպառնալիք է ինչպես ուղեւորների, այնպես էլ` այդ ճանապարհով երթեւեկող մյուս մեքենաների համար»:



Որպես ստեղծված իրավիճակից ելք, Մեսխիշվիլու խոսքերով, ասոցիացիան առաջարկում է վարորդական վկայականներին տալ որոշակի թվով միավորներ: «Օրինակ, արագության գերազանցման դեպքում ընդհանուր միավորների թվից կհանվի այդ խախտման համար սահմանված, ենթադրենք 20 միավորը: Այդպես նաեւ մյուս խախտումների համար: Սա ընդունված եվրոպական մոդել է: Խախտումների որոշակի քանակությունից հետո, երբ սահմանված միավորները վերանան, վարորդները ստիպված կլինեն վարորդական նոր վկայականներ ստանալ: Այս ձեւով վարորդները ստիպված կլինեն պահպանել երթեւեկության կանոնները»,- նշեց Դավիթ Մեսխիշվիլին:

«Անվտանգ ճանապարհների համար» ալյանսի վարչության նախագահ Էկա Լալիաշվիլու հայտարարությամբ, դա միայն Վրաստանի հիմնախնդիրը չէ, թեպետ մյուս երկրներում հարցի կարգավորման ուղղությամբ որոշակի քայլեր են կատարվում: «Ավտովթարները հնարավոր է նվազագույնի հասցնել, եթե իրականացնենք որոշակի միջոցառումներ: Աշխարհում տարեկան ավտովթարի զոհ է դառնում շուրջ 300 հազար մարդ: Դա այնքան նշանակալի է, որ ՄԱԿ-ը մշակեց հարցի կարգավորմանն ուղղված 10-ամյա ծրագիր: Եվրոպայում 2011 թվականին հատուկ արշավ կազմակերպվեց: Արդյունքում, ավտովթարներից մահացության ցուցանիշը նվազեց 18 տոկոսով: Միջոցառումների իրականացմամբ, ծրագրվել է 2020 թվականի համար կիսով չափ կրճատել զոհերի թիվը»,- ասաց նա եւ հավելեց. «2015 թվականի առաջին կիսամյակի տվյալներով, ավտովթարների զոհերի թիվը, նախորդ տարվա վեց ամիսների համեմատությամբ, գրեթե կրկնապատկվել է: Կրկնապատկվել է նաեւ ավտովթարների ու վիրավորվածների թիվը»:

Էկա Լալիաշվիլու խոսքերով, ավտովթարների դեպքում հարկ է ուշադրությունը բեւեռել մարդկային գործոնի վրա, հարկ է ավելի խստացնել օրենսդրությունը: Ըստ Էկա Լալիաշվիլու, վթարների պատճառ է նաեւ հետիոտնների կողմից երթեւեկության կանոնների խախտումը: «Այս առումով եւս օրենսդրությունը խստացվելու է: Սովորաբար մեզանում հետիոտնը չի ընկալվում որպես ճանապարհային երթեւեկության մասնակից: Եթե Եվրոպայում հետիոտնը երթեւեկության առաջին մասնակիցն է, մեզանում այն հայտնվել է վերջին աստիճանի վրա: Նման պայմաններում, հետիոտնները հայտնվում են ծանր վիճակում, վթարի դեպքում նրանք տուժում են, եւ հաճախ նման դեպքերում մեքենաների վարորդներին ոչինչ չի լինում»,- նշեց Էկա Լալիաշվիլին` հավելելով. «Մեր կողմից անցկացված ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ վարորդների 75 տոկոսը հետիոտններին ճանապարհը չեն զիջում: Իրենց հերթին, հետիոտնների պնդմամբ, գետնուղիներից չեն օգտվում, որովհետեւ դրանք անկարգ վիճակում են: Ստացվում է փակ շրջան, որից ելքը թե' վարորդների եւ թե' հետիոտնների համար օրենսդրության խստացումն է»,- հայտարարեց «Անվտանգ ճանապարհների համար» ասոցիացիայի նախագահը:

*Պատրաստեց*
*ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆԸ*